ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՏԿՆ-ԳՀԾՁԲ-2018/14

ք. Երևան

«09» ապրիլի 2018 թ.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ս. Ամիրխանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Ֆլեշ Մոտորս>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Լալայանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1658600 (մեկ միլիոն վեց հարյուր հիսունութ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն	<<Ֆլեշ Մոտորս>> ՍՊԸ
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3	ք. Երևան, Ռուբինյանց փող. 31
Կենտրոնական Գանձապետարան	Արարատբանկ ԲԲԸ
Հ/Հ 900011018703	Հ/Հ 1510012745550100
ՀԿՀՀ 02565516	ՀԿՀՀ 00873228
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	50111170/1	ՎԱԶ 21104 պետհամարանիշը՝336 LL 60 , 2006թ, ավտոմեքենայի տեխնիկական սպասարկման ծառայություններ	դրամ	103200	1	ք. Երևան	մինչև 2018թ դեկտեմբերի 15-ը
2	50111170/1	ՎԱԶ 21214 պետհամարանիշը՝ 002 OU 05,2007թ, ավտոմեքենայի տեխնիկական սպասարկման ծառայություններ	դրամ	133200	1	ք. Երևան	մինչև 2018թ դեկտեմբերի 15-ը
3	50111170/1	Կիա Օպտիմա (KIA OPTIMA) պետհամարանիշը՝ 340LL60,2007թ, Կիա Օպտիմա (KIA OPTIMA) պետհամարանիշը՝ 333LL60,2009թ, Կիա Օպտիմա (KIA OPTIMA) պետհամարանիշը՝ 100 LL55 ,2009թ, Կիա Օպտիմա (KIA OPTIMA) պետհամարանիշը՝ 320 LL 60 ,2009թ, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայություններ	դրամ	746600	1	ք. Երևան	մինչև 2018թ դեկտեմբերի 15-ը
4	50111170/1	Տոյոտա Լենդ Կռուիզեր (TOYOTA LAND CRUISER PRADO 2,7) պետհամարանիշը՝ 323 LL 60 ,2008թ ավտոմեքենայի տեխնիկական սպասարկման ծառայություններ	դրամ	247200	1	ք. Երևան	մինչև 2018թ դեկտեմբերի 15-ը
5	50111170/1	Ռենջ Ռովեր (RANGE ROVER) պետհամարանիշը՝ 330 LL 60 ,2005թ, ավտոմեքենայի տեխնիկական սպասարկման ծառայություններ	դրամ	244800	1	ք. Երևան	մինչև 2018թ դեկտեմբերի 15
6	50111170/1	Տոյոտա Ավալոն (TOYOTA Avalon) պետհամարանիշը՝ 327 LL 60 ,2008թ, ավտոմեքենայի տեխնիկական սպասարկման ծառայություններ	դրամ	183600	1	ք. Երևան	մինչև 2018թ դեկտեմբերի 15-ը

Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկում

Տեխնիկական բնութագիր և ձեռքբերման պայմաններ

Գնման առարկա է հանդիսանում << տրանսպորտի, կապի տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության տրանսպորտային միջոցներ տեխնիկական սպասարկման ծառայությունները,որոնք խմբավորված են հետևյալ չափաբաժիններում
1. ՎԱԶ 21104 պետհամարանիշը՝336 LL 60 , 2006թ,
2. ՎԱԶ 21214 պետհամարանիշը՝ 002 OU 05,2007թ,
3. Կիա Օպտիմա (KIA OPTIMA) պետհամարանիշը՝ 340LL60,2007թ, Կիա Օպտիմա (KIA OPTIMA) պետհամարանիշը՝ 333LL60,2009թ, Կիա Օպտիմա (KIA OPTIMA) պետհամարանիշը՝ 100 LL55 ,2009թ, Կիա Օպտիմա (KIA OPTIMA) պետհամարանիշը՝ 320 LL 60 ,2009թ
4. Տոյոտա Լենդ Կռուիզեր (TOYOTA LAND CRUISER PRADO 2,7) պետհամարանիշը՝ 323 LL 60 ,2008թ
5. Ռենջ Ռովեր (RANGE ROVER) պետհամարանիշը՝ 330 LL 60 ,2005թ
6. Տոյոտա Ավալոն (TOYOTA Avalon) պետհամարանիշը՝ 327 LL 60 ,2008թ
տեխնիկական սպասարկման, անսարքությունների վերացման, նորոգման, պահեստամասերի տեղադրման կամ փոխարինման ծառայությունների մատուցումը՝ հետևյալ լրակազմով

Չափաբաժնի համարը	N/N	SU-1 ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Չափման միավորը	Քանակը	Միավորի գին	Ընդամենը
1	2	3	4	5	6	7
1	1	ՎԱԶ 21104 Շարժիչի յուղի զտիչի փոխարինում	հատ	1	1,000	1,000
	2	ՎԱԶ 21104 Շարժիչի յուղի փոխարինում	լիտր	4	3,200	12,800
	3	ՎԱԶ 21104 Անվաբացքերի ուղղում առջևի անիվներ	հատ	1	3,000	3,000
	4	ՎԱԶ 21104 Անվաբացքերի ուղղում հետևի անիվներ	հատ	1	3,000	3,000
	5	ՎԱԶ 21104 Մեխանիկական Փ/Տ –ի յուղի փոխարինում	լիտր	1	2,000	2,000
	6	ՎԱԶ 21104 Վառելիքի զտիչի փոխարինում	հատ	1	1,000	1,000
	7	ՎԱԶ 21104 Ռադիատորի ռետինե խողովակի փոխարինում	հատ	1	2,000	2,000
	8	ՎԱԶ 21104 Առջևի կամ հետևի կախոցի Հ/Տ	հատ	1	3,000	3,000
	9	ՎԱԶ 21104 Կախոցի վռանի փոխարինում 1 հատ	հատ	1	3,000	3,000
	10	ՎԱԶ 21104 Դիմացի ցնցամեղմիչների փոխարինում	հատ	1	5,000	5,000
	11	ՎԱԶ 21104 Հետևի կախոցի վռանի փոխարինում մեք. Վրա	հատ	1	3,000	3,000

	12	ՎԱԶ 21104 Լծակի մեծ վռանի փոխարինում 1 հատ	հատ	1	3,000	3,000
	13	ՎԱԶ 21104 Առջևի լծակի գնդե հոդակապի փոխարինում	հատ	1	5,000	5,000
	14	ՎԱԶ 21104 հետևի լծ. Գնդե հոդակապի փոխարինում մեք-ի վրա	հատ	1	2,000	2,000
	15	ՎԱԶ 21104 Ղեկային կալունի ձգանի Հ/Տ փոխարինում	հատ	1	2,000	2,000
	16	ՎԱԶ 21104 Ղեկային կալունի ծայրակալի Հ/Տ 1 կողմ	հատ	1	3,000	3,000
	17	ՎԱԶ 21104 Առջևի կամ հետևի արգել.սկավառակի փոխարինում	հատ	4	2,500	10,000
	18	ՎԱԶ 21104 Առջևի արգելակ. Կոճղակների փոխարինում	հատ	1	3,000	3,000
	19	ՎԱԶ 21104 Հետևի արգ. Կոճղակների փոխարինում	հատ	1	5,400	5,400
	20	ՎԱԶ 21104 Ատամնավոր փոկի փոխարինում	հատ	1	2,000	2,000
	21	ՎԱԶ 21104 Արգելակման սկավառակի հարդեցում	հատ	1	2,000	2,000
	22	ՎԱԶ 21104 Մեխ. հ/տ փ/տ նորոգում	հատ	1	1,000	1,000
	23	ՎԱԶ 21104 Սուպպորտի մանժետ	հատ	1	500	500
	24	ՎԱԶ 21104 Տանող ատամնանիվի առանցքակալ	հատ	1	2,000	2,000
	25	ՎԱԶ 21104 Մարման ընթացքի տվիչ	հատ	1	3,000	3,000
	26	ՎԱԶ 21104 Դիմացի անվակունդի առանցքակալի փոխ.	Հատ	1	3,000	3,000
	27	ՎԱԶ 21104 Հետևի անվակունդի առանցքակալի փոխ.	Հատ	1	3,000	3,000
	28	ՎԱԶ 21104 Շարժիչի ծնկաձև լիսեռի դիմացի խցուկի փոխում	հատ	1	3,000	3,000
	29	ՎԱԶ 21104 Շարժիչի ծնկաձև լիսերի հետևի խցուկի փոխ մեխ	հատ	1	2,000	2,000
	30	Անվադողի փոխարինում հավասարակշռում	հատ	4	2,000	8,000
	31	Անվադողի վերանորոգում	հատ	2	500	1,000
	32	ՎԱԶ 21104 Շարժիչի գլխիկի միջադիրի փոխում	հատ	1	500	500
	Ընդամենը ըստ չափաբաժնի					**103,200**
2	1	ՎԱԶ 21214 Առջևի վերևի լծակի Հ/Տ	հատ	1	2,000	2,000
	2	ՎԱԶ 21214 Հետևի կախոցի վռանի փոխարինում մեք. Վրա	հատ	1	3,200	3,200
	3	ՎԱԶ 21214 Լծակի փոքր վռանի փոխարինում 1 հատ	հատ	1	2,000	2,000
	4	ՎԱԶ 21214 Առջևի լծակի գնդե հոդակապի փոխարինում	հատ	1	2,000	2,000
	5	ՎԱԶ 21214 Ձգաձող լծակի Հ/Տ 1հատ հետևի	հատ	2	2,000	4,000

6	ՎԱԶ 21214 Անվակունդի Հ/Տ դիմացի անիվի	հատ	2	4,000	8,000
7	ՎԱԶ 21214 Անվակունդի առանցքակալի փոխարինում	հատ	1	3,000	3,000
8	ՎԱԶ 21214 Կայունարարի Հ/Տ ամբողջությամբ	հատ	1	1,000	1,000
9	ՎԱԶ 21214 Ռադիատորի Հ/Տ	հատ	1	3,000	3,000
10	ՎԱԶ 21214 Ռադիատորի ռետինե խողովակի փոխարինում	հատ	1	3,000	3,000
11	ՎԱԶ 21214 Առջևի կամ հետևի կախոցի Հ/Տ	հատ	1	3,000	3,000
12	ՎԱԶ 21214 Կախոցի վռանի փոխարինում 1 հատ	հատ	1	3,000	3,000
13	ՎԱԶ 21214 Դիմացի ցնցամեղմիչների փոխարինում	հատ	1	5,000	5,000
14	ՎԱԶ 21214 Հետևի ցնցամեղմիչների փոխարինում զսպանկի միջի	հատ	1	5,000	5,000
15	ՎԱԶ 21214 Ցնցամեղմիչի վռանի փոխարինում 1հատ մեք. Վրա	հատ	1	3,000	3,000
16	ՎԱԶ 21214 Կայունարարի ռետինե վռանի փոխարինում 1 հատ	հատ	1	3,000	3,000
17	ՎԱԶ 21214 Ղեկային կալունի ձգանի Հ/Տ	հատ	1	4,000	4,000
18	ՎԱԶ 21214 Ղեկային կալունի ծայրակալի Հ/Տ 1 կողմ	հատ	1	2,000	2,000
19	ՎԱԶ 21214 Հիդրոուժեղարարի փոկի փոխարինում	հատ	1	2,000	2,000
20	ՎԱԶ 21214 Առջևի կամ հետևի արգել.սկավառակի փոխարինում	հատ	1	5,000	5,000
21	ՎԱԶ 21214 Առջևի արգելակ. Սկավառ. Կոճղակների փոխարինում	հատ	1	5,000	5,000
22	ՎԱԶ 21214 Հետևի արգ. Սկավառակ. Կոճղակների փոխարինում	հատ	1	4,000	4,000
23	ՎԱԶ 21214 Արգելակման սկավառակի հարդեցում	հատ	2	4,000	8,000
24	ՎԱԶ 21214 Շարժիչի ծնկաձև լիսեռի դիմացի խցուկի փոխում	հատ	1	4,000	4,000
25	ՎԱԶ 21214 Շարժիչի ծնկաձև լիսերի հետևի խցուկի փոխ մեխ	հատ	1	4,000	4,000
26	ՎԱԶ 21214 Շարժիչի գլխիկի միջադիրի փոխում	հատ	1	4,000	4,000
27	ՎԱԶ 21214 Մեխ. փ/տ հ/տ	հատ	1	500	500
28	ՎԱԶ 21214 Մեխ. փ/տ նորոգում	հատ	1	500	500

	29	ՎԱԶ 21214 Սուպպորտի մանժետ	հատ	1	5,000	5,000
	30	ՎԱԶ 21214 Տանող ատամնանիվի առանցքակալ	հատ	1	3,000	3,000
	31	ՎԱԶ 21214 Մարման ընթացքի տվիչ	հատ	1	6,000	6,000
	32	ՎԱԶ 21214 Դիմացի անվակունդի առանցքակալի փոխ.	Հատ	1	3,000	3,000
	33	ՎԱԶ 21214 Հետևի անվակունդի առանցքակալի փոխ.	Հատ	1	3,000	3,000
	34	ՎԱԶ 21214 Գնդաձև ձգանի փոխարինում	հատ	1	3,000	3,000
	35	ՎԱԶ 21214 Հովհարի փոխարնում	հատ	1	3,000	3,000
	36	ՎԱԶ 21214 Շարժիչի կափարիչի ներդիրի փոխարինում	հատ	1	3,000	3,000
	37	ՎԱԶ 21214 Անվադողի փոխարինում և հավասակշռում	հատ	4	2,000	8,000
	Ընդամենը ըստ չափաբաժնի					**133,200**
3	1	KIA OPTIMA Հետևի կախոցի վռանի փոխարինում մեք.վրա	հատ	2	3,000	6,000
	2	KIA OPTIMA Լծակի փոքր վռանի փոխարինում 1 հատ	հատ	2	3,000	6,000
	3	KIA OPTIMA Լծակի մեծ վռանի փոխարինում 1 հատ	հատ	1	2,500	2,500
	4	KIA OPTIMA Կայունարարի Հ/S ամբողջությամբ	հատ	1	100	100
	5	KIA OPTIMA Կայունարարի ռետինե վռանի փոխարինում 1 հատ	հատ	1	3,000	3,000
	6	KIA OPTIMA Զանգակի ռեզինե ծածկոցի փոխարինում 1 կողմ	հատ	1	1,000	1,000
	7	KIA OPTIMA Առջևի կամ հետևի արգել.սկավառակի փոխարինում	հատ	1	6,000	6,000
	8	KIA OPTIMA Ատամնավոր փոկի փոխարինում	հատ	1	6,000	6,000
	9	KIA OPTIMA Շարժիչի յուղի զտիչի փոխարինում	հատ	4	1,000	4,000
	10	KIA OPTIMA Շարժիչի յուղի փոխարինում	լիտր	18	3,000	54,000
	11	KIA OPTIMA Շարժիչ բարձիկ հանում և տեղադրում	հատ	2	5,000	10,000
	12	KIA OPTIMA Ինժեկտորների լվացում	հատ	2	6,000	12,000
	13	KIA OPTIMA Կարդանային լիսեռի խաչուկի փոխարինում	հատ	1	1,000	1,000
	14	KIA OPTIMA Դիմացի անվակունդի առանցքակալի փոխ.	հատ	1	5,000	5,000

15	KIA OPTIMA Հետևի անվակունդի առանցքակալի փոխ.	հատ	1	5,000	5,000
16	KIA OPTIMA ABS-ի տվիչ	հատ	1	15,000	15,000
17	KIA OPTIMA Անվաթացքի կարգավորում	հատ	4	6,000	24,000
18	KIA OPTIMA Շարժիչի գլխիկի ներդիրի փոխարինում	հատ	1	13,000	13,000
19	KIA OPTIMA Մխոցային օղակների փոխարինում	հատ	1	14,000	14,000
20	KIA OPTIMA Հրիչների փոխարինում	կոմպլ	1	2,000	2,000
21	KIA OPTIMA Բ/լիսերի կափարիչի միջադիրի փոխում	հատ	1	15,000	15,000
22	KIA OPTIMA Շարժիչի բլոկի գլխիկի հանում տեղադրում	հատ	1	15,000	15,000
23	KIA OPTIMA Առջևի արգելակման կոճղակների փոխարինում	հատ	4	6,000	24,000
24	KIA OPTIMA Հետևի արգելակման կոճղակների փոխարինում	հատ	2	6,000	12,000
25	KIA OPTIMA Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	հատ	8	1,000	8,000
26	KIA OPTIMA Գեներատորի հանում և տեղադրում	հատ	1	5,000	5,000
27	KIA OPTIMA Վառոցքի մոմերի փոխարինում	հատ	2	6,000	12,000
28	KIA OPTIMA Առջևի ցնցամեղմիչների հանում և տեղադրում	հատ	2	6,000	12,000
29	KIA OPTIMA Հետևի ցնցամեղմիչների փոխարինում	հատ	2	1,000	2,000
30	KIA OPTIMA Ղեկային կալունի հանում և տեղադրում	հատ	1	3,000	3,000
31	KIA OPTIMA Բենզամղիչի հանում և տեղադրում	հատ	1	2,000	2,000
32	KIA OPTIMA Վերևի լծակի հանում և տեղադրում	հատ	1	2,000	2,000
33	KIA OPTIMA Վառոցքի մոմ	հատ	4	2,000	8,000
34	KIA OPTIMA Աջ կամ ձախ ձգան	հատ	4	2,000	8,000
35	KIA OPTIMA Առջևի հարվածամեղմիչ	հատ	2	25,000	50,000
36	KIA OPTIMA Հարվածամեղմիչի վռան	հատ	2	15,000	30,000
37	KIA OPTIMA Խցուկ բաշխիչ լիսեռի	հատ	2	3,000	6,000
38	KIA OPTIMA Առջևի արգելակման կոճղակների կոմպլեկտ	հատ	4	25,000	100,000
39	KIA OPTIMA Հետևի արգելակման կոճղակների	հատ	4	20,000	80,000

		կոմպլեկտ				
	40	KIA OPTIMA Կարդանային լիսեռի խաչուկ	հատ	2	3,000	6,000
	41	KIA OPTIMA Վառելանյութի զտիչ	հատ	2	15,000	30,000
	42	KIA OPTIMA ԱՓՏ յուղ	լիտր	16	3,000	48,000
	43	KIA OPTIMA Ջերմային տվիչ	հատ	2	1,000	2,000
	44	KIA OPTIMA Ջրի տվիչ	հատ	1	1,000	1,000
	45	KIA OPTIMA Հիդրոուժեղացուցիչի յուղ	լիտր	2	7,500	15,000
	46	KIA OPTIMA Ծայրակալ	հատ	6	1,000	6,000
	47	KIA OPTIMA Սառեցման հեղուկ	լիտր	6	1,000	6,000
	48	KIA OPTIMA Ներքևի լծակի վռան	հատ	3	1,000	3,000
	49	KIA OPTIMA Ջրի պոմպ	հատ	1	1,000	1,000
	50	KIA OPTIMA Շարժիչի փական դուրս մղող	հատ	4	1,000	4,000
	51	KIA OPTIMA Շարժիչի փական ներս մղող	հատ	4	1,000	4,000
	52	KIA OPTIMA Մխոց	հատ	4	1,000	4,000
	53	KIA OPTIMA Բաշմակ	հատ	1	1,000	1,000
	54	KIA OPTIMA Հիդրոռգան	հատ	1	2,000	2,000
	55	KIA OPTIMA Հիդրոհրիչ	հատ	6	1,000	6,000
	56	KIA OPTIMA Ծնկաձև լիսեռի շարժաթևային ներդիրների կոմպլեկտ	հատ	1	1,000	1,000
	57	KIA OPTIMA Ծնկաձև լիսեռի արմատական ներդիրների կոմպլեկտ	հատ	1	1,000	1,000
	58	KIA OPTIMA Օդի զտիչ	հատ	4	2,500	10,000
	59	KIA OPTIMA ԱՓՏ յուղի զտիչ	հատ	4	3,000	12,000
	Ընդամենը ըստ չափաբաժնի					**746,600**
4	1	TOYOTA PRADO Ինժեկտորի ֆարսունկաների մաքրում	հատ	1	6,000	6,000
	2	TOYOTA PRADO Առջևի կայունարարի վռանների փոխարինում	հատ	1	4,000	4,000
	3	TOYOTA PRADO Վերևի լծակի հանում և տեղադրում	հատ	1	4,000	4,000
	4	TOYOTA PRADO Ղեկային կալունի առանցքակալի փոխարինում	հատ	1	3,000	3,000
	5	TOYOTA PRADO Ղեկային ձողի ծայրակալի փոխարինում	հատ	2	5,000	10,000
	6	TOYOTA PRADO Առջևի արգելակման կոճղակների փոխարինում	հատ	1	6,000	6,000
	7	TOYOTA PRADO Հետևի արգելակման կոճղակների փոխարինում	հատ	1	6,000	6,000
	8	TOYOTA PRADO Առջևի աջ և ձախ ցնցամեղմիչների	հատ	1	6,000	6,000

	փոխարինում				
9	TOYOTA PRADO Հետևի աջ և ձախ ցնցամեղմիչների փոխարինում	հատ	1	6,000	6,000
10	TOYOTA PRADO Գլխավոր գլանի վերանորոգում	հատ	1	5,000	5,000
11	TOYOTA PRADO Դիֆերենցիալի առանցքակալի փոխարինում	հատ	1	5,000	5,000
12	TOYOTA PRADO Գեներատորի հանում և տեղադրում	հատ	1	3,000	3,000
13	TOYOTA PRADO Անվաբացքի կարգավորում	հատ	1	6,000	6,000
14	TOYOTA PRADO ԱՓՏ-ի հանում և տեղադրում	հատ	1	3,000	3,000
15	TOYOTA PRADO Հարվածամեղմիչի թասակի փոխարինում	հատ	1	6,000	6,000
16	TOYOTA PRADO Հետևի անվակունդի ներքևի առանցքակալի փոխարինում	հատ	1	5,000	5,000
17	TOYOTA PRADO Ռադիատորի փոխարինում	հատ	1	10,000	10,000
18	TOYOTA PRADO Հովհարի փոխարինում	հատ	1	3,000	3,000
19	TOYOTA PRADO Ջրի պոմպի փոխարինում	հատ	1	3,000	3,000
20	TOYOTA PRADO Կոնդիցիոների փոկի փոխարինում	հատ	1	3,000	3,000
21	TOYOTA PRADO Ձեռքի արգելակման ճոպանի փոխարինում	հատ	1	3,000	3,000
22	TOYOTA PRADO Հիդրոուժեղացուցիչի ռետինե խողովակի փոխարինում	հատ	1	3,000	3,000
23	TOYOTA PRADO Առջևի արգելակման կոճղակների կոմպլեկտ	հատ	1	17,700	17,700
24	TOYOTA PRADO Հետևի արգելակման կոճղակների կոմպլեկտ	հատ	1	16,000	16,000
25	TOYOTA PRADO Օդի զտիչ	հատ	1	5,000	5,000
26	TOYOTA PRADO Վառելիքի զտիչ	հատ	1	2,000	2,000
27	TOYOTA PRADO Առջևի ցնցամեղմիչ	հատ	1	20,000	20,000
28	TOYOTA PRADO Հետևի ցնցամեղմիչ	հատ	1	20,000	20,000
29	TOYOTA PRADO Շարժիչի յուղ	լիտր	5	3,000	15,000
30	TOYOTA PRADO Շարժիչի յուղի զտիչ	հատ	1	5,000	5,000
31	TOYOTA PRADO ԱՓՏ-Ի յուղ	լիտր	4	7,500	30,000
32	TOYOTA PRADO ԱՓՏ-Ի յուղի	հատ	1	7,500	7,500

		զտիչ				
	Ընդամենը ըստ չափաբաժնի					**247,200**
5	1	RANGE ROVER Ինժեկտորի ֆարսունկաների մաքրում	հատ	1	500	500
	2	RANGE ROVERԱռջևի կայունարարի վռանների փոխարինում	հատ	1	2,000	2,000
	3	RANGE ROVER Վերևի լծակի հանում և տեղադրում	հատ	1	2,000	2,000
	4	RANGE ROVER Ղեկային կալունի առանցքակալի փոխարինում	հատ	1	3,000	3,000
	5	RANGE ROVER Ղեկային ձողի ծայրակալի փոխարինում	հատ	2	1,500	3,000
	6	RANGE ROVER Առջևի արգելակման կոճղակների փոխարինում	հատ	1	5,000	5,000
	7	RANGE ROVER Հետևի արգելակման կոճղակների փոխարինում	հատ	1	5,000	5,000
	8	RANGE ROVER Առջևի աջ և ձախ ցնցամեղմիչների փոխարինում	հատ	1	3,000	3,000
	9	RANGE ROVER Հետևի աջ և ձախ ցնցամեղմիչների փոխարինում	հատ	1	3,000	3,000
	10	RANGE ROVER Գլխավոր գլանի վերանորոգում	հատ	1	3,000	3,000
	11	RANGE ROVER Դիֆերենցիալի առանցքակալի փոխարինում	հատ	1	4,000	4,000
	12	RANGE ROVER Գեներատորի հանում և տեղադրում	հատ	1	4,000	4,000
	13	RANGE ROVER Անվաբացքի կարգավորում	հատ	1	12,000	12,000
	14	RANGE ROVER ԱՓՏ-ի հանում և տեղադրում	հատ	1	5,000	5,000
	15	RANGE ROVER Հարվածամեղմիչի թասակի փոխարինում	հատ	1	9,000	9,000
	16	RANGE ROVER Ռադիատորի փոխարինում	հատ	1	5,000	5,000
	17	RANGE ROVER Հովհարի փոխարինում	հատ	1	5,000	5,000
	18	RANGE ROVER Ջրի պոմպի փոխարինում	հատ	1	5,000	5,000
	19	RANGE ROVER Կոնդիցիոների փոկի փոխարինում	հատ	1	5,000	5,000
	20	RANGE ROVER Հետևի արգելակման կոճղակների կոմպլեկտ	հատ	1	35,000	35,000
	21	RANGE ROVER Հիդրոուժեղացուցիչի ռետինե խողովակի փոխարինում	հատ	1	1,000	1,000

	22	RANGE ROVER Առջևի արգելակման կոճղակների կոմպլեկտ	հատ	1	40,000	40,000
	23	RANGE ROVER Օդի զտիչ	հատ	1	8,000	8,000
	24	RANGE ROVERՎառելիքի զտիչ	հատ	1	9,300	9,300
	25	RANGE ROVER Առջևի ցնցամեղմիչ	հատ	1	20,000	20,000
	26	RANGE ROVER Շարժիչի յուղ	լիտր	8	5,000	40,000
	27	RANGE ROVER Շարժիչի յուղի զտիչ	հատ	1	8,000	8,000
	Ընդամենը ըստ չափաբաժնի					**244,800**
6	1	TOYOTA AVALON Ինժեկտորի ֆարսունկաների մաքրում	հատ	1	1,500	1,500
	2	TOYOTA AVALONԱռջևի կայունարարի վռանների փոխարինում	հատ	1	3,000	3,000
	3	TOYOTA AVALON Վերևի լծակի հանում և տեղադրում	հատ	1	2,000	2,000
	4	TOYOTA AVALON Ղեկային կալունի առանցքակալի փոխարինում	հատ	1	2,000	2,000
	5	TOYOTA AVALON Ղեկային ձողի ծայրակալի փոխարինում	հատ	2	3,000	6,000
	6	TOYOTA AVALON Առջևի արգելակման կոճղակների փոխարինում	հատ	1	5,000	5,000
	7	TOYOTA AVALON Հետևի արգելակման կոճղակների փոխարինում	հատ	1	5,000	5,000
	8	TOYOTA AVALON Առջևի աջ և ձախ ցնցամեղմիչների փոխարինում	հատ	1	5,000	5,000
	9	TOYOTA AVALON Հետևի աջ և ձախ ցնցամեղմիչների փոխարինում	հատ	1	5,000	5,000
	10	TOYOTA AVALON Գլխավոր գլանի վերանորոգում	հատ	1	3,000	3,000
	12	TOYOTA AVALON Գեներատորի հանում և տեղադրում	հատ	1	3,000	3,000
	13	TOYOTA AVALON Անվաբացքի կարգավորում	հատ	1	12,000	12,000
	14	TOYOTA AVALON ԱՓՏ-ի հանում և տեղադրում	հատ	1	1,000	1,000
	15	TOYOTA AVALON Հարվածամեղմիչի թասակի փոխարինում	հատ	1	5,000	5,000
	16	TOYOTA AVALON Հետևի անվակունդի ներքևի առանցքակալի փոխարինում	հատ	1	5,000	5,000
	17	TOYOTA AVALON Ռադիատորի փոխարինում	հատ	1	10,000	10,000
	18	TOYOTA AVALON Հովհարի փոխարինում	հատ	1	500	500

	19	TOYOTA AVALON Ջրի պոմպի փոխարինում	հատ	1	5,000	5,000
	20	TOYOTA AVALON Կոնդիցիոների փոկի փոխարինում	հատ	1	500	500
	21	TOYOTA AVALON Ձեռքի արգելակման ճոպանի փոխարինում	հատ	1	500	500
	22	TOYOTA AVALON Հիդրոուժեղացուցիչի ռետինե խողովակի փոխարինում	հատ	1	500	500
	23	TOYOTA AVALON Առջևի արգելակման կոճղակների կոմպլեկտ	հատ	1	22,000	22,000
	24	TOYOTA AVALON Հետևի արգելակման կոճղակների կոմպլեկտ	հատ	1	18,600	18,600
	25	TOYOTA AVALON Օդի զտիչ	հատ	1	5,000	5,000
	26	TOYOTA AVALON Վառելիքի զտիչ	հատ	1	5,000	5,000
	27	TOYOTA AVALON Առջևի ցնցամեղմիչ	հատ	1	15,000	15,000
	28	TOYOTA AVALON Հետևի ցնցամեղմիչ	հատ	1	15,000	15,000
	29	TOYOTA AVALON Շարժիչի յուղ	լիտր	5	3,500	17,500
	30	TOYOTA AVALON Շարժիչի յուղի զտիչ	հատ	1	5,000	5,000
	Ընդամենը ըստ չափաբաժնի					**183,600**

Սկիզբը	ավարտը
Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառվելու օրը	2018 թվականի դեկտեմբերի 15-ը:
1 - պարտադիր պայման է օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի չօգտագործված լինելը	
2 - Ծառայությունների մատուցումը Երևան քաղաքում	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/4
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011018703
ՀԿՀՀ 02565518[illegible]

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

<<Ֆլեշ Մոտորս>> ՍՊԸ
ք. Երևան, Ռուբինյանց փող. 31
Արարատբանկ ԲԲԸ
Հ/Հ 15100127455501[illegible]
ՀՎՀՀ 00873228

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	ՎԱԶ 21104 պետհամարանիշը՝336 LL 60 , 2006թ, ավտոմեքենայի տեխնիկական սպասարկման ծառայություններ	50111170/1	-	-	-	-	-	-	48500	48500	48500	103200	103200	103200	103200
2	ՎԱԶ 21214 պետհամարանիշը՝ 002 OU 05,2007թ, ավտոմեքենայի տեխնիկական սպասարկման ծառայություններ	50111170/1	-	-	-	-	-	-	49200	49200	49200	133200	133200	133200	133200
3	Կիա Օպտիմա (KIA OPTIMA) պետհամարանիշը՝ 340LL60,2007թ, Կիա Օպտիմա (KIA OPTIMA) պետհամարանիշը՝ 333LL60,2009թ, Կիա Օպտիմա (KIA OPTIMA) պետհամարանիշը՝ 100 LL55 ,2009թ, Կիա Օպտիմա (KIA OPTIMA) պետհամարանիշը՝ 320 LL 60 ,2009թ, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայություններ	50111170/1	-	-	-	186600	186600	186600	380700	380700	380700	746600	746600	746600	746600
4	Տոյոտա Լենդ Կռուիզեր (TOYOTA LAND CRUISER PRADO 2,7) պետհամարանիշը՝ 323 LL 60 ,2008թ ավտոմեքենայի տեխնիկական սպասարկման ծառայություններ	50111170/1	-	-	-	98800	98800	98800	148300	148300	148300	247200	247200	247200	247200

5	Ռենջ Ռովեր (RANGE ROVER) պետհամարանիշը՝ 330 LL 60 ,2005թ, ավտոմեքենայի տեխնիկական սպասարկման ծառայություններ	50111170/1	-	-	117500	168900	168900	168900	198200	198200	198200	244800	244800	244800	244800
6	Տոյոտա Ավալոն (TOYOTA Avalon) պետհամարանիշը՝ 327 LL 60 ,2008թ, ավտոմեքենայի տեխնիկական սպասարկման ծառայություններ	50111170/1			-	29300	29300	29300	49500	49500	49500	183600	183600	183600	183600

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական
տեխնոլոգիաների նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011018703
ՀՎՀՀ 02565518

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

<<Ֆլեշ Մոտորս>> ՍՊԸ
ք. Երևան, Ռուբինյանց փող. 31
Արարատբանկ ԲԲԸ
Հ/Հ 15100127455501000
ՀՎՀՀ 00873228

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 9
ՏԿՆ-ԳՀԾՁԲ-2018/14 *ծածկագրով*
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան «_____»_____ 20 թ.**

«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ն ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Լալայանի / նույնականացման քարտ 002741999, տրված 01.06.2015, 004 կողմից/ որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ _ՏԿՆ-ԳՀԾՁԲ-2018/14 ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և վավեր է Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ
ք. Երևան, Ռուբինյանց փ. 31:
«Արարատբանկ» ԲԲԸ
Ընկերության Հ/Հ 1510012745550100
Ընկերության ՀՎՀՀ 00873228

_____
Ա. Լալայան

Կ.Տ
** *լրացվում է մասնակցի կողմից*

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ[1] N**

(պայմանագրի կատարման ապահովում)

2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ «Ֆլեշ մոտորս» ՍՊԸ

4. Վճարողի բանկը՝ «Արարատբանկ» ԲԲԸ

5. Վճարողի հաշվի համարը՝ 1510012745550100

6. Վճարողի ՀՎՀՀ՝ 00873228

7. Վճարողի ՀԾՀ՝ 1103790110

8. Շահառու՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն

9. Շահառուի ՀՎՀՀ՝ 02565518

10. Շահառուի բանկը՝ Կենտրոնական գանձապետարան

11. Շահառուի հաշվի համարը /հշ.N/ 900005000741

12. Գումարը թվերով և բառերով՝ 165860 (Հարյուր վաթսունհինգ հազար ութ հարյուր վաթսուն)

13. Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ AMD

14. Գործարքի /վճարման/ նպատակը՝ պայմանագրի կատարման ապահովում

15.Պայմանագրի ծածկագիրը՝ ՏԿՆ-ԳՀԾՁԲ-2018/14

16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը 17. կից՝--- էջ

19.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 19.բ. Կ.Տ.	18.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 18.բ. Կ.Տ.
Կատարված է շահառուի բանկի կողմից 20.ա. /_____/ /ստորագրություն/ 20.բ. Կ.Տ. "___" ___ 20___ թ.	Կատարված է վճարողի բանկի կողմից 21.ա. /_____/ /ստորագրություն/ 21.բ. Կ.Տ. 22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

[1] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր տվյալներ» լրացման կարգի։*